# 2023-2024 ՈՒՍՏԱՐԻ
# ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԻ ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ և ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

## 8 - ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Տևողությունը՝ **90** րոպե (**1,5** ժամ):
Գնահատումը կատարվում է 20 միավորանոց համակարգով:
Բոլոր առաջադրանքներն ունեն մեկ ճիշտ պատասխան:
Ճիշտ պատասխանը գնահատվում է 1(մեկ) միավոր:

**1. Ինչի՞ առկայության դեպքում կարող է լինել արդյունավետ արտաքին քաղաքականություն:**

ա. Հզոր բանակի առկայության դեպքում
բ. Պետական հիմնը, գերբի և դրոշի առկայության դեպքում
գ. Հզոր տնտեսության առկայության դեպքում
դ. Զինված ուժերի առկայության դեպքում

**2. Հայկական Ո՞ր արքայատոհմերի զինանշաններն են պատկերված Հայաստանի Հանրապետության զինանշանի հիմք հանդիսացող վահանի վրա:**

ա.Երվանդունեիների, Արշակունիների, Բագրատունիների, Ռուբինյանների
բ. Արտաշեյանների, Արշակունիների, Բագրատունիների և Ռուբինյանների
գ. Հայկազունիների, Երվանդունիների, Հեթումյանների և Արշակունիների
դ. Հայկազունիների, Երվանդունիների, Հեթումյանների և Սարդուրյանների

**3. Նշվածներից ո՞րն է եղել հին դարերում բանակի կազմակերպման կարևորագույն սկզբունք:**

ա.միանձնյա կառավարումը
բ. կոլեգիալ ղեկավարումըվ
գ. միանձնյա ղեկավարումը
դ. կոլեգիալ կառավարումը

**4. Ինչի՞ խորհրդանիշն է զորամասի մարտական դրոշը:**

ա.Զինվորական պատվի, խիզախության ու փառքի խորհրդանիշն է:
բ. Զինվորական խիզախության և հավատարմության խորհրդանիշն է:
գ. Զինվորականի պատվի և քաջության խորհրդանիշն է:
դ.Զինվորական նվիրվածության, քաջության և հավատարմության խորհրդանիշն է:

**5. Հրամանը տալուց հետո հրամանատարը ի՞նչ կարող է պահանջել ենթակայից թյուրիմացություններից և անցանկալի հետևանքներից խուսափելու համար:**

ա.Գրի առնի հրամանի բովանդակությունը
բ. Լսի և անմիջապես կատարի հրամանը
գ. Կրկինի հրամանի բովանդակությունը
դ. Անթերի կատարի հրամանը

**6. Ո՞րն է համարվում հանդիպական մարտ**

ա.Հարձակվող հակառակորդի վրա հարձակումը:
բ. Հարձակման պատրաստվող հակառակորդի վրա հարձակումը:
գ. Գրոհող հակառակորդի վրա հարձակումը:
դ. Չնահանջող հակառակորդի վրա հարձակումը:

**7. Քանի՞ ջոկն է համարվում մեկ դասակ.**

ա. 3 բ. 4 գ. 2 դ. 5

**8.** **Տարբերանշանում զինվորական Ո՞ր կոչումն է:**

ա.Կապիտան
բ. Ավագ ենթասպա
գ. Գեներալ-լեյտենանտ
դ. Ենթասպա

**9. Ո՞րն է համարվում հետապնդում:**

ա. Նահանջող հակառակորդի վրա հարձակումը:
բ. Առաջխաղացում չունեցող հակառակորդի վրա հարձակումը:
գ. Շրջանցող հակառակորդին ետ մղելը:
դ. Հարձակվող հակառակորդին ետ մղելը:

**10. Որքա՞ն է զինվորների միջև հեռավորությունը մարտակարգ կազմելիս:**

ա. 6-7 մ (8-12 քայլ) բ. 7-8 մ (9-13 քայլ)
գ. 5-6 մ (6-11 քայլ) դ. 6-8 մ (8-12 քայլ)

**11. Ինչպե՞ս է որոշվում հրաձգային զենքի կրակային հզորությունը բնորոշող կրակի խտությունը:**

ա.Ճակատի 1 մետրի վրա 1 րոպեում արձակված գնդակների թվով
բ. Ճակատի 2 մետրի վրա 1 րոպեում արձակված գնդակների թվով
գ. Ճակատի 1 մետրի վրա 2 րոպեում արձակված գնդակների թվով
դ. Ճակատի 0,5 մետրի վրա 1 րոպեում արձակված գնդակների թվով

**12. Համաձայն պատերազմների փորձի, ե՞րբ է հրաժարվում հակառակորդը հետագա հարձակումից:**

ա. Երբ կորցնում է իր կենդանի ուժի և կրակային միջոցների 60 տոկոսը
բ. Երբ կորցնում է իր կենդանի ուժի և կրակային միջոցների 40 տոկոսը
գ. Երբ կորցնում է իր կենդանի ուժի և կրակային միջոցների 50 տոկոսը:
դ. Երբ կորցնում է իր կենդանի ուժի և կրակային միջոցների 45 տոկոսը

**13. Ինչպե՞ս է կատարվում զորաշարժը հարձակման ընթացքում:**

ա. Հակառակորդին շրջանցելու միջոցով
բ. Հակառակորդին թևանցելու միջոցով
գ. Հակառակորդին շրջանցելու և թևանցելու միջոցով
դ. Հակառակորդին շրջանցելու, թևանցելու և մոլորեցնելու միջոցով

**14.Պաշտպանությունում քանի՞ մետր ճակատ է զբաղեցնում ջոկը:**

**ա.** 110 **բ.** 90 **գ.** 105 **դ.** 100

**15. Հարձակման ժամանակ քանի՞ մետր ճակատ է զբաղեցնում ջոկը**

ա. 50 մ. բ. 100 մ. գ. 150 մ. դ. 25 մ.

**16. Ինչպե՞ս կարող է գործել մոտոհրաձգային ջոկը հետախուզության և պահպանության ժամանակ:**

ա. Կարող է գործել ինքնուրույն:
բ. Կարող է գործել դասակի կազմով:
գ. Կարող է գործել ինքնագլուխ:
դ. Կարող է գործել դասակի հրամանատարի հետ միասին:

**17. Ինչու՞ է հրաձգային զենքի հնարավորությունները առավելագույնս օգտագործվում պաշտպանությունում:**

ա. Որովհետև կրակը վարվում է նախապատրաստված դիրքերից և կայուն դրությունից:
բ. Որովհետև կրակը վարվում է նախապես տեղակայված դրությունից:
գ. Որովհետև կրակը վարվում է կահավորված դիրքերից:
դ. Որովհետև կրակը վարվում է նոր զենքերից:

**18. Ի՞նչ հեռավորությունից է ՀՄՄ (ԶՓ)-ն կրակով աջակցում հարձակվող զինվորներին:**

**ա.** 200 մ **բ.** 250 մ **գ.** 100 մ. **դ.** 150 մ.

**19.Նշվածներից որո՞նք են մտնում ավտոմատի լրակազմի մեջ:**

**ա.** Պիտույքները, փոկը և պահեստատուփի պայուսակը
**բ.** Պիտույքները և պահեստատուփի պայուսակը
**գ.** Փոկը և պահեստատուփի պայուսակը
**դ.** Պիտույքները, փոկը, պահեստատուփի պայուսակը և փամփուշտները

**20. Ինչի՞ համար է առավել նպաստավոր լեռնային տեղանքը:**

**ա.** Հարձակման
**բ.** Հետախուզության
**գ.** Քողարկման
**դ.** Պաշտպանության